

Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ

29.09.2017



Ավագ սերնդի հարգելի ներկայացուցիչներ

Ջերմորեն շնորհավորում եմ տարեցների միջազգային օրվա կապակցությամբ:
Խորհրդանշական այս օրը, անշուշտ, բոլորիս օրն է, որ նշան է բոլոր սերունդների
միասնականության, ավագ սերնդի հանդեպ կրտսեր սերունդների երախտագիտության
ու սիրո:

Տարեցների նկատմամբ հարգանքը մեր բարոյական արժեքների անխախտ մասն է
կազմում, և, ավանդապես փոխանցվելով սերնդեսերունդ, հանդիսանում զարգացած ու
առաջադեմ հասարակություն ունենալու հիմքերից մեկը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ և մաղթում առողջություն, անհոգ ու երկար
տարիների կյանք:

Արամայիս Գրիգորյան
ՀՀ Արարատի մարզպետ